Հարանիք տարան զիս նոր փեսի,
Իսկ չի տեսայ քան կորուսի։

Աստուած ինձ քաղցր էր 'ւողորմած,
Զախուս գտայ, չիլաւ ձեռաց,
Ամէն ոք ուսին յամէն իրաց,
Տեսնի զողայր սիրաս 'ի զիմաց։

Զախուս ասայ խիստ մի հոգար,
Ուրախացիր երբոր գտար.
Մինչ 'ի յուներս յուլիս զրժար՝
Որ կերցնեմ քեզ մեղրով խիար։

Զախուս համեստ խօսէր սիրով,
Հետ տանուիկնայ նստէր 'ի քով.
Պարող խրբաստ կու տայր յոլով՝
Մեղրիկ բերէք կաթին սերով։

Ոչխարի միս լինի փուշտայ,
Ու տաքդեղով շինած քուֆտայ.(1)
Դատիր 'ի քոմն յորդորէ զնայ
Տուր գաւաթիկ մ՝ այլ 'ի վերայ։

Գեղին երէց ժամանակայ,
Մտկայն ասէր յամէն իրաց,
Զլինի յառջևն բերէք շոր հայ
Զևքրս չերթայր 'ի յամօթայ։

Ի յընթեւանուլքն այս տարիս՝
Տամ առողին շատ ողորմիս.
Երկու օրիկ որ թարկեց(2) զիս
Յակառաս չկրաւ ճընճղուկ մի միս։

Յաշխարհս այլ խնեթ չկայր քան զիս
Լուաս(3) կալայ անդէտ բանիս.
Օրիծդան մարդիկք՝ նախատանն զիս,
Պանի նստին 'ի մեծ մէնլիս։

(ՀԷՆ ՅԷՐԱՓԷՐԻ)

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Աղուէսն և Խեցգետն բարեկամացան, և արարին ցանք 'ի միասին, և 'ի ժամ հնձոյն աշխատեցան 'ի մէկ տեղ որպէս օրէն էր հո-

(1) Ծեծած մսով կերակուր։ — (2) Թողուց։ — (3) Իմ կամ փափագ։

զագործացն, և արարին շեղջ ցորենոյ. և ասէ՝ աղուէսն ցխեցգետն, շահնա և ուտենուելն գեղիս պատեհ են տեսնէ որ եսերկու առնում և դուն մէկ. և խոժռանցաւ խեցգետն 'ի վերայ բանիցն, և յերկարեաց կուրն 'ի մէջ իւրեանց, և սկսան ասել և տարակուսած կային. ասէ՝ խեցգետն ընդ աղուէսն՝ թէ արիկ կրթիցուք 'ի հեռաւոր տեղի և վաղենք, և որ յառաջ հասանի 'ի շեղջս քանզընկերն, նա առնու զերկու բաժինն ի ցորենոյն. և զայն լուեալ աղուէսն յոյժ ուրախացաւ, և գնացին հեռացան 'ի կալէն. Խեցգետն յառաջ կացոյց զԱղուէսն և ասէ, վաղի՛ր յառաջ քան զիս, և խեցգետն բռնեաց յաղուեսոյն 'ի ծայրս ագոյն, գնաց զհետ նորա. զոր 'ի բաղում խնդուանէն աղուէսն ոչ կարաց խմանալ. իբրև հասաւ առաջի կալոյն, ասէ Աղուէսն 'ի միտս իւր, դառնամ և տեսանեմ զԽեցգետն 'ի դալ է, և ի դառնալն հասաւ ծայր ագոյն 'ի տեղին 'ի վերայ շեղջին. և առեալ Խեցգետն գէտին սկսաւ չափել և ասել 'ի ՅԱրաբ լեզուն՝ պոֆլահ վահրա, որ թարգմանի հայերէն՝ յանուն Աստուծոյ մէկ. և տեսեալ զԽեցգետն Աղուէսն 'ի վերայ շեղջին, զարմացաւ և ասէ, զո՞ր ընթացութիւնդ զոր գիտացեր՝ զԱրաբ լեզուդ ոչ ուսոյց քեզ։ Եւ այսպիսի խմաստութեամբ Խեցգետն յաղթեաց զԱղուէսն, և էառ զերկու բաժին ցորենոյն։

ԱԶԴՐ

Ներկայ ամսագրոյս ա. թերթը ապուելէն զկնի բաղձալով Հոկտ. և Նոյ. ամսագիրները միացնել և ընդարձակ և հարուստ նիւթեր պարունակել, վասնորոյ ձգեցաք՝